ՎԱՐԿ ԹԻՎ 2561 - ARM(SF)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Հատուկ գործողություններ)

(Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

ՄԻՋԵՎ

12 հոկտեմբերի 2009թ

LAS:ARM 42145

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Հատուկ գործողություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ կնքված 2009 թվականի հոկտեմբերի 12-ին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Վարկառու) և ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (այսուհետ՝ ԱԶԲ) միջև:

ԵԼՆԵԼՈՎ ՆՐԱՆԻՑ, ՈՐ

(Ա) Վարկառուի և ԱԶԲ-ի միջև 2009 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված շրջանակային ֆինանսավորման պայմանագրով ԱԶԲ-ն համաձայն է Բազմափուլ ֆինանսական գործիքի շրջանակներում ֆինանսավորում տրամադրել Վարկառուին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) ծրագրերը ֆինանսավորելու նպատակով,

(Բ) Վարկառուի կողմից սեպտեմբերի 18-ին ներկայացված պարբերական ֆինանսավորման դիմումով Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին սույն Վարկային պայմանագրի Հավելված 1-ում նկարագրված Ծրագիրն իրականացնելու նպատակով վարկ ստանալու համար, և

(Գ) ԱԶԲ-ն համաձայն է, իր Հատուկ ֆոնդի ռեսուրսների հաշվին, ստորև շարադրված պայմաններով և ժամկետներում, վարկ տրամադրել Վարկառուին,

ԱՐԴ, սույն Պայմանագրի կողմերը հանգել են հետևյալ համաձայնության.

ՀՈԴՎԱԾ I

Վարկի տրամադրման կարգը, սահմանումները

Բաժին 1.01. ԱԶԲ-ի՝ 2006 թ. հունվարի 1-ին ընդունված՝ Հատուկ Գործառնությունների Վարկի տրամադրման կարգի (այսուհետ՝ Կարգ) բոլոր դրույթները այսուհետ տարածվում են սույն Վարկային պայմանագրի վրա և կիրառվում են լիարժեք ուժով և ազդեցությամբ, ինչպես կհամարվեին ամբողջությամբ այս փաստաթղթում շարադրված լինելու պարագայում:

Բաժին 1.02. Վարկի տրամադրման կարգում սահմանված բառային նշանակությունները գործում են և կիրառելի են սույն Վարկային համաձայնագրի համար, եթե համատեքստը այլ բան չի պահանջում: Ի լրումն, ստորև բերված բառերը ունեն հետևյալ իմաստը.

(ա) «Հայավտոճան» նշանակում է Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ ՊՈԱԿ կամ որևէ այլ իրավահաջորդ, որն ընդունելի է ԱԶԲ-ի կողմից,

(բ) «Խորհրդատվության ուղեցույց» նշանակում է ԱԶԲ-ի կամ վարկառուների կողմից խորհրդատուներից օգտվելու ԱԶԲ-ի ուղեցույցը (2007, ըստ ժամանակ առ ժամանակ լրամշակվող տարբերակի),

(գ) «Գործիք» նշանակում է բազմափուլ ֆինանսական գործիքի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից Վարկառուին Ներդրումային ծրագրի ծրագրերն իրականացնելու նպատակով տրամադրվող ֆինանսավորում,

(դ) «ՇՖՀ» նշանակում է շրջանակային ֆինանսավորման համաձայնագիր՝ ստորագրված 2009թ. սեպտեմբերի 15-ին ԱԶԲ-ի և Վարկառուի միջև, Գործիքի առնչությամբ,

(ե) «Ապրանքներ» նշանակում է վարկային միջոցներից ֆինանսավորվող սարքավորումներ և նյութեր, ինչպես նաև համապատասխան ծառայություններ, ինչպիսիք են փոխադրումներ, ապահովագրում, տեղադրում, շահագործում, դասընթացներ և նախնական պահպանում, բացառությամբ խորհրդատվական ծառայությունների,

(զ) «ՆԲՀ» նշանակում է ծրագրի համար իրականացված նախնական բնապահպանական հետազոտություն,

(է) «Ներդրումային ծրագիր» ունի ընդհանուր մաս Ա-ում սահմանված իմաստը,

(ը) «ՏԿՆ» նշանակում է Վարկառուի Տրանսպորտի և կապի նախարարությունը կամ որևէ այլ իրավահաջորդ, որն ընդունելի է ԱԶԲ-ի կողմից,

(թ) «ՊՖԴ» նշանակում է պարբերական ֆինանսավորման դիմում, որը ներկայացվել է կամ ներկայացվում է Վարկառուի կողմից Գործիքի շրջանակում տրամադրվող յուրաքանչյուր տրանշի համար, իսկ սույն Վարկային համաձայնագրում նշանակում է պարբերական ֆինանսասավորման դիմում ներկայացված 2009թ. սեպտեմբերի 18- ին,

(ժ) «ԾԿԲ» նշանակում է ծրագրի կառավարման բաժին, որը կստեղծվի Հայավտոճան-ում Ծրագրի շրջանակում նախատեսված գործողությունների ամենօրյա համակարգումն, իրականացնումն ու կառավարումն իրականացնելու նպատակով, ինչպես մանրամասն ներկայացված է սույն փաստաթղթի Հավելված 5-ի կետ 3-ում,

(ի) «Գնումների ուղեցույց» նշանակում է ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցը (2007, ըստ ժամանակ առ ժամանակ լրամշակվող տարբերակի),

(լ) «Գնումների ծրագիր» նշանակում է Ծրագրի գնումների ծրագիրը՝ ստորագրված 2009թ. սեպտեմբերի 1-ին և փոխհամաձայնեցված Վարկառուի և ԱԶԲ-ի միջև, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է ըստ Գնումների ուղեցույցի, Խորհրդատվության ուղեցույցի և ԱԶԲ-ի հետ այլ պայմանավորվածությունների,

(խ) «Ծրագրի իրականացման գործակալություն», Վարկի տրամադրման կարգի նպատակով և իմաստով նշանակում է ՏԿՆ-ն կամ որևէ այլ իրավահաջորդ, որն ընդունելի է ԱԶԲ-ի կողմից և պատասխանատու է Ծրագրի իրականացման համար,

(ծ) «Ծրագրի տեխնիկական միջոցներ» նշանակում է Ծրագրի շրջանակում կառուցված կամ կառուցվող հարմարությունները, և տրամադրված կամ տրամադրվող սարքավորումներն ու նյութերը,

(կ) «Ծրագրի ճանապարհ» նշանակում է *Երևան-Աշտարակ* չորսշերտանի ճանապարհի մոտավորապես 18.4 կմ հատվածը և *Երևան-Արարատ* չորսշերտանի ճանապարհի մոտավորապես 38 կմ հատվածը, որը պետք է բարեկարգվի այս Ծրագրի շրջանակում, ինչպես նկարագրված է սույն Վարկային պայմանագրի Հավելված 1-ում,

(հ) «Աշխատանքներ» նշանակում է կառուցման կամ շինարարական աշխատանքներ, որոնք ֆինանսավորվում են վարկային միջոցներից, ներառյալ այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են հորատումը և գծագրումը, ինչպես նաև Ծրագրին վերաբերող ծառայությունները, որոնք տրամադրվում են որպես միանձնյա պատասխանատվության կամ Վերջնական տեսքով հանձնման պայմանագիր, բացառությամբ խորհրդատվական ծառայությունների:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Բաժին 2.01. ԱԶԲ-ն համաձայն է ԱԶԲ-ի Հատուկ ֆոնդի ռեսուրսներից Վարկառուին տրամադրել 38,443,000 Փոխարկման Հատուկ Իրավունքին (ՓՀԻ) համարժեք գումար՝ տարբեր արտարժույթներով:

Բաժին 2.02. (ա) Վարկառուն պարտավորվում է ԱԶԲ-ին վճարել տարեկան մեկ տոկոս (1%) տոկոսադրույքով վարկային վճար վարկի մարման արտոնյալ ժամանակահատվածում՝ Վարկային հաշվից մասնահանված և վճարման ենթակա վարկաբաժնի դիմաց, իսկ այնուհետև վճարել տարեկան մեկ և կես տոկոս (1.5%):

(բ) Այս Բաժնի (ա) կետում օգտագործված «Արտոնյալ ժամանակահատված»-ը նշանակում է այն ժամանակահատվածը, որը նախորդում է մայր գումարի առաջին մարման ամսաթվին, ըստ սույն Համաձայնագրին կցված՝ ամորտիզացիոն վճարումների (մասնամարումների) Հավելված 2-ի:

Բաժին 2.03. Վարկի գումարի վրա հաշվարկված տոկոսները և ցանկացած այլ վճարներ պետք է վճարվեն կիսամյակը մեկ անգամ՝ ամեն տարվա մարտի 15-ին և սեպտեմբերի 15-ին:

Բաժին 2.04. Վարկառուն պարտավոր է Վարկային հաշվից ստացված Վարկի մայր գումարը մարել՝ ըստ սույն Համաձայնագրին կցված Հավելված 2-ի ամորտիզացիոն վճարումների ժամանակացույցի:

Բաժին 2.05. Վարկի մայր գումարի և նրա վրա հաշվարկված տոկոսների մարումը կատարվում է դոլարով՝ ըստ Վարկի տրամադրման կարգի Բաժիններ 4.03(ա)-ի և 4.04-ի:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործումը

Բաժին 3.01. Վարկառուն պարտավորվում է ապահովել, որ Վարկային միջոցներն ուղղվեն Ծրագրային ծախսերի ֆինանսավորմանը՝ սույն Վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Բաժին 3.02. Վարկային միջոցներով ֆինանսավորվող ապրանքները, աշխատանքները, խորհրդատվական ծառայությունները և այլ ծախսերը, ինչպես նաև Վարկային գումարների հատկացումը այդ ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների և այլ ծախսերի տարբեր կատեգորիաներին կատարվում է համաձայն սույն Վարկային համաձայնագրի Հավելված 3-ի դրույթների, ընդ որում նշված Հավելվածը կարող է ժամանակ առ ժամանակ լրամշակվել՝ Վարկառուի և ԱԶԲ-ի փոխադարձ համաձայնությամբ:

Բաժին 3.03. Եթե չկա այլ պայմանավորվածություն ԱԶԲ-ի հետ, Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնումները պետք է կատարվեն սույն Վարկային համաձայնագրի Հավելված 4-ի դրույթներին համապատասխան:

Բաժին 3.04. Վարկային հաշվից մասհանումները պետք է ուղղվեն միայն այն ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների ծախսերի ծածկմանը, որոնք՝

(ա) արտադրվում կամ մատակարարվում են և այն խորհրդատվական ծառայությունները, որոնք մատուցվում են ԱԶԲ-ի այն անդամ պետությունների կողմից, որոնք ԱԶԲ-ի կողմից ժամանակ առ ժամանակ առանձնանշվում են որպես գնումների ընդունելի աղբյուրներ, և

(բ) ապրանքներ, աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ, որոնք բավարարում են ԱԶԲ-ի կողմից ժամանակ առ ժամանակ հատկանշվող համապատասխան այլ պահանջներին:

Բաժին 3.05. Ըստ Վարկերի տրամադրման կարգի Բաժին 8.02-ի, Վարկի եզրափակման ժամկետ է սահմանվում 2014թ.-ի հունիսի 30-ը, կամ ցանկացած այլ, Վարկառուի և ԱԶԲ-ի փոխադարձ համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ փոփոխվող ամսաթիվ:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պարտավորություններ

Բաժին 4.01. Ծրագրի իրականացման ընթացքում Վարկառուն պարտավոր է կատարել, կամ ապահովել, որպեսզի կատարվեն, սույն Վարկային համաձայնագրի Հավելված 5-ում շարադրված բոլոր պարտավորությունները:

Բաժին 4.02. (ա) Վարկառուն պարտավորվում է (i) Ծրագրի համար նախատեսված առանձին հաշիվներ վարել, կամ ապահովել դրանց վարումը, (ii) համաձայն համապատասխանաբար կիրառվող աուդիտորական ստանդարտների՝ ապահովել այդ հաշիվների և համապատասխան ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտը անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձառությունը և տեխնիկական առաջարկը ԱԶԲ-ի համար ընդունելի են, (iii) հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ քան յուրաքանչյուր ֆիսկալ տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին ներկայացնել աուդիտի ենթարկված հաշիվների վավերացված պատճենները և ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև աուդիտի հաշվետվությունը (այդ թվում՝ Վարկային միջոցների օգտագործման և սույն Վարկային պայմանագրի ֆինանսական պարտավորությունների հետ համապատասխանության, ինչպես նաև ընթացիկ հաշվի/ ծախսերի քաղվածքի վերաբերյալ աուդիտի եզրակացությունը), բոլորը անգլերեն լեզվով, և (iv) ժամանակ առ ժամանակ ԱԶԲ-ի ողջամիտ պահանջով ԱԶԲ-ին ներկայացնել այդ հաշիվների և ֆինանսական հաշվետվությունների և դրանց աուդիտի վերաբերյալ այլ տեղեկություններ:

(բ) Վարկառուն հնարավորություններ է ընձեռում ԱԶԲ-ին, վերջինիս պահանջով, քննարկելու Ծրագրի ներքո իրականացվող գործառնությունների հետ կապված Վարկառուի ֆինանսական գործերը՝ սույնի 4.02-րդ կետի ա) ենթակետում նախատեսված ձևով Վարկառուի կողմից հրավիրված աուդիտորների հետ միասին, ինչպես նաև ապահովում և պահանջում է այդ աուդիտորների ներկայացուցիչներին մասնակցել ԱԶԲ-ի կողմից պահանջվող նման քննարկումներին այն պայմանով, որ դրանց մասնակցի Վարկառուի իրավասու ներկայացուցիչը, եթե այլ կերպ չի ցանկանում Վարկառուն:

Բաժին 4.03. Վարկառուն պարտավորվում է ԱԶԲ-ի ներկայացուցիչներին հնարավորություն տալ ստուգել Վարկային միջոցներով ֆինանսավորվող ապրանքները և աշխատանքները, ինչպես նաև ցանկացած փաստաթղթեր և գրառումներ:

ՀՈԴՎԱԾ V

Գործողության ժամկետը

Բաժին 5.01. Սույն Վարկային համաձայնագրի գործողության մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվում Վարկային համաձայնագրի ամսաթվից հետո վաթսուն (60) օր անց ամսաթիվը՝ Կարգի Բաժին 9.04-ին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ VI

Այլ դրույթներ

Բաժին 6.01. Վարկառուի էկոնոմիկայի նախարարը նշանակվում է Վարկառուի ներկայացուցիչ՝ համաձայն Կարգի Բաժին 11.02-ի պահանջների:

Բաժին 6.02. Ստորև ներկայացված հասցեները նշվում են համաձայն Կարգի Բաժին 11.01-ի պահանջների.

Վարկառու

Էկոնոմիկայի նախարարություն
Մհեր Մկրտչյան 5,
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան

Ֆաքս՝.(37410) 526-577

ԱԶԲ

Զարգացման Ասիական Բանկ

Փ.Ա. 789
0980 Մանիլա, Ֆիլիպիններ

Ֆաքս՝

(632) 636-2444
(632) 636-2428

ՎԵՐՈՀԻՇՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, սույն Պայմանագրի կողմերը, հանդես գալով ի դեմս իրենց հավուր պատշաճի լիազորված ներկայացուցիչների, համաձայնել են վավերացնելու սույն Վարկային համաձայնագրին իրենց վերը նշված անունից, ստորագրելով այն ԱԶԲ-ի գլխավոր գրասենյակում՝ վերը նշված ամսաթվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Լիազոր ներկայացուցիչ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

_____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի նկարագրությունը

1. Ներդրումային ծրագրի խնդիրն է Վարկառուի երկրում զարգացնել ենթատարածաշրջանային և պետական տրանսպորտային ցանց: Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում. (i) կստեղծվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհներ, (ii) կմեծանա առևտրի շրջանառությունը և մրցակցությունը, (iii) կնվազեն փոխադրումների ծախսերը, (iv) կմեծանա շուկաների, աշխատատեղերի և սոցիալական ծառայությունների հասանելիությունը, և (v) կբարելավվի կառավարումը:

2. Որպես Ներդրումային ծրագրի մաս, Ծրագրի նպատակն է բարելավել ճանապարհային ենթակառուցվածքը, ճանապարհային ցանցի կառավարման կարողությունը և Ծրագրում ընդգրկված ճանապարհների անվտանգությունը:

3. Ինչպես մանրամասն ներկայացված է ՊՖԴ-ում, Ծրագիրը կազմված է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

(i) Երևան-Աշտարակ չորսշերտանի ճանապարհի մոտ 18.4կմ հատվածի վերակառուցում,

(ii) Երևան-Արարատ չորսշերտանի ճանապարհի անվտանգությանն բարձրացում,

(iii) օժանդակում ծրագրի կառավարմանը, ներառյալ Ներդրումային ծրագրի ներքո հետագա ծրագրի (ծրագրերի) մանրամասն նախագծի առաջարկվող ֆինանսավորումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը և մրցույթի փաստաթղթերի և գնումների պատրաստումը, և

(iv) տրանսպորտային ոլորտի ռազմավարության ներքո ճանապարհային ենթասեկտորային ծրագրին օժանդակության տրամադրում:

4. Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2013թ.-ի օգոստոսի 31-ին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ամորտիզացիոն վճարների գրաֆիկ

(Հյուսիս- հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 1)

Վճարման սահմանված ժամկետ		Մայր գումարի վճարում (արտահայտված ՓՀԻ-ով)
1	2018թ. մարտի 15	800,896,00
2	2018թ. սեպտեմբերի 15	800,896,00
3	2019թ. մարտի 15	800,896,00
4	2019թ. սեպտեմբերի 15	800,896,00
5	2020թ. մարտի 15	800,896,00
6	2020թ. սեպտեմբերի 15	800,896,00
7	2021թ. մարտի 15	800,896,00
8	2021թ. սեպտեմբերի 15	800,896,00
9	2022թ. մարտի 15	800,896,00
10	2022թ. սեպտեմբերի 15	800,896,00
11	2023թ. մարտի 15	800,896,00
12	2023թ. սեպտեմբերի 15	800,896,00
13	2024թ. մարտի 15	800,896,00
14	2024թ. սեպտեմբերի 15	800,896,00
15	2025թ. մարտի 15	800,896,00
16	2025թ. սեպտեմբերի 15	800,896,00
17	2026թ. մարտի 15	800,896,00
18	2026թ. սեպտեմբերի 15	800,896,00
19	2027թ. մարտի 15	800,896,00
20	2027թ. սեպտեմբերի 15	800,896,00
21	2028թ. մարտի 15	800,896,00
22	2028թ. սեպտեմբերի 15	800,896,00
23	2029թ. մարտի 15	800,896,00
24	2029թ. սեպտեմբերի 15	800,896,00
25	2030թ. մարտի 15	800,896,00
26	2030թ. սեպտեմբերի 15	800,896,00
27	2031թ. մարտի 15	800,896,00
28	2031թ. սեպտեմբերի 15	800,896,00
29	2032թ. մարտի 15	800,896,00
30	2032թ. սեպտեմբերի 15	800,896,00
31	2033թ. մարտի 15	800,896,00
32	2033թ. սեպտեմբերի 15	800,896,00
33	2034թ. մարտի 15	800,896,00
34	2034թ. սեպտեմբերի 15	800,896,00
35	2035թ. մարտի 15	800,896,00
36	2035թ. սեպտեմբերի 15	800,896,00
37	2036թ. մարտի 15	800,896,00
38	2036թ. սեպտեմբերի 15	800,896,00
39	2037թ. մարտի 15	800,896,00

40	2037թ. սեպտեմբերի 15	800,896,00
41	2038թ. մարտի 15	800,896,00
42	2038թ. սեպտեմբերի 15	800,896,00
43	2039թ. մարտի 15	800,896,00
44	2039թ. սեպտեմբերի 15	800,896,00
45	2040թ. մարտի 15	800,896,00
46	2040թ. սեպտեմբերի 15	800,896,00
47	2041թ. մարտի 15	800,896,00
48	2041թ. սեպտեմբերի 15	800,888,00
	Ընդամենը	**38,443,000,00**

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Վարկային միջոցների մասհանումը և հատկացումը

Ընդհանուր դրույթներ

1. Այս հավելվածին կից ներկայացված աղյուսակում առանձնանշվում են Վարկային միջոցներից ֆինանսավորվող ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների և այլ ծախսերի կատեգորիաները և Վարկի գումարների հատկացումը յուրաքանչյուր կատեգորիային (այսուհետ՝ Աղյուսակ):Այս հավելվածում նշված «կատեգորիա» կամ «կատեգորիաներ» բառերը հղում են կատարում աղյուսակի կատեգորիային կամ կատեգորիաներին:

ԱԶԲ-ի ֆինանսավորման տոկոսները

2. Եթե չկա այլ պայմանավորվածություն ԱԶԲ-ի հետ, աղյուսակում թվարկված կատեգորիաներում նախատեսված ծախսային հոդվածները ֆինանսավորվում են Վարկային միջոցների հաշվին աղյուսակում սահմանված տոկոսների հիման վրա:

Տոկոսագումարներ

3. Կատեգորիա 5-ում նախատեսված գումարը հատկացվում է Ծրագրի իրականացման ընթացքում Վարկի տոկոսագումարները վճարելու համար:

Վերահատկացում

4. Չնայած Աղյուսակում սահմանված Վարկային միջոցների հատկացումներին և մասհանումների տոկոսներին.

(ա) եթե որևէ կատեգորիային հատկացված վարկի գումարը անբավարար է այդ կատեգորիայում պայմանավորվածության համաձայն բոլոր ծախսերի վճարման համար, ԱԶԲ-ն կարող է, Վարկառուին ծանուցելու միջոցով, (i) վերահատկացում կատարել այդ կատեգորիային այն չափով, որքան անհրաժեշտ է հաշվարկված պակասորդը լրացնելու համար վարկի այն գումարներից, որոնք հատկացվել են այլ կատեգորիային, սակայն, ԱԶԲ-ի կարծիքով, անհրաժեշտ չեն այլ ծախսերի համար, և (ii) եթե նման վերահատկացումը չի կարող լիովին բավարարել հաշվարկված պակասորդը, կրճատել այդ ծախսի համար կիրառվող մասհանումների տոկոսը, որպեսզի հնարավոր լինի շարունակել այդ կատեգորիայի հետագա մասհանումները, մինչև բոլոր նախատեսված ծախսերը կատարվեն, և

(բ) եթե որևէ կատեգորիային հատկացված վարկային գումարը ավելանում է տվյալ կատեգորիայում բոլոր պայմանավորվածության համաձայն կատարված ծախսերից հետո, ԱԶԲ-ն կարող է, Վարկառուին ծանուցում ներկայացնելով, վերահատկացնել այդ ավելացած գումարը այլ կատեգորիաների:

Վճարման ընթացակարգը

5. Եթե չկա այլ պայմանավորվածություն ԱԶԲ-ի հետ, ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների և այլ ծախսերի ֆինանսավորման համար վարկային միջոցները վճարվում են ԱԶԲ-ի 2007թ.-ի հունվարին ընդունված «Վարկի վճարման ձեռնարկ»-ի (ԱԶԲ-ի Վարկի վճարման ձեռնարկ) համաձայն, որը ժամանակ առ ժամանակ լրամշակվում է:

Ընթացիկ հաշիվ, ծախսերի քաղվածք

6. (ա) Եթե չկա այլ պայմանավորվածություն ԱԶԲ-ի հետ, Վարկառուն համաձայնագիրը գործողության մեջ մտնելու օրվանից անմիջապես հետո ընթացիկ հաշիվ է բացում այն բանկում, որն ընդունելի է ԱԶԲ-ի կողմից: Ընթացիկ հաշիվը ստեղծվում, տնօրինվում և իրացվում է համաձայն ԱԶԲ-ի Վարկի վճարման ձեռնարկի և Վարկառուի և ԱԶԲ-ի միջև փոխհամաձայնեցված պայմանավորվածության մանրամասների: Ընթացիկ հաշվի արտարժույթն է [դոլարը]: Ընթացիկ հաշվին մուտքագրվող նախնական գումարը չպետք է գերազանցի (i) Ծրագրի իրականացման առաջին վեց ամիսների ընթացքում ընթացիկ հաշվից վճարվող հաշվարկված ծախսերի, կամ (ii) վարկի գումարի տաս (10) տոկոսին համարժեք գումարի ստորին մակարդակը:

(բ) Ծախսերի քաղվածքի (ԾՔ) ընթացակարգը կարող է օգտագործվել Ծրագրի թույլատրելի ծախսերի փոխհատուցման և ընթացիկ հաշվին մուտքագրված կանխավճարներն իրացնելու համար՝ համաձայն ԱԶԲ-ի Վարկի վճարման ձեռնարկի և Վարկառուի և ԱԶԲ-ի միջև փոխհամաձայնեցված պայմանավորվածության մանրամասների: Ցանկացած առանձին վճարում, որը փոխհատուցվում կամ իրացվում է ըստ ԾՔ-ի ընթացակարգի, չի գերազանցում 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարը:

Հետին թվով ֆինանսավորում

7. Վարկի հաշվից մասհանումները կարող են կատարվել նախքան Պայմանագրի գործողության մեջ մտնելու օրը Ծրագրի շրջանակում առաջացած ողջամիտ ծախսերի վճարման համար, սակայն ոչ շուտ քան սույն վարկային պայմանագրի գործողության մեջ մտնելու օրվանից տասներկու (12) ամիս առաջ նման թույլատրելի ծախսերը հետին թվով ֆինանսավորելու համար, որոնք չեն գերազանցում վարկային ընդհանուր գումարի 20 տոկոսը:

Աղյուսակ

Վարկային միջոցների հատկացումներ և տրամադրումներ (Հյուսիս – հարավ միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 1)			
Կատեգորիա			ԱԶԲ ֆինանսավորում
Համար	Տեսակը	Հատկացված գումար ՓՀԻ '000 կատեգորիա	Տոկոսագումարը և վարկային հաշվից տրամադրվող գումարի հիմքը *
1	Աշխատանքներ	24,347	ընդհանուր ծախսերի 100 տոկոսը
2	Խորհրդատվական ծառայություններ	3,204	ընդհանուր ծախսերի 100 տոկոսը
3	Ապրանքներ	641	ընդհանուր ծախսերի 100 տոկոսը
4	Ծրագրի կառավարման աջակցություն	641	ընդհանուր ծախսերի 100 տոկոսը
5	Տոկոսագումարը շինարարության ընթացքում	1,281	ընդհանուր ծախսերի 100 տոկոսը
6	Չհատկացված	8,329	
	Ընդամենը	38,443	

* Վարկառուի ներպետական հարկերի և տուրքերի համաձայն:

Հավելված 4

Ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնումներ

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները և խորհրդատվական ծառայությունները ենթակա են լինելու և առաջնորդվելու են Գնումների մասին ուղեցույցներով և, համապատասխանաբար, խորհրդատվական ուղեցույցներով:
2. Սույն վարկային պայմանագրում գործածված և չսահմանված բոլոր տերմիններն օգտագործված են Գնումների մասին ուղեցույցներում և/կամ խորհրդատվական ուղեցույցներում սահմանված իմաստով:

Բ. Ապրանքների և աշխատանքների գնումներ

3. Եթե ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա ապրանքների և աշխատանքների գնումներն իրականացվում են բացառապես ստորև նախատեսված գնումների ընթացակարգերի համաձայն.

Միջազգային մրցույթ
Ազգային մրցույթ
Հաղթող մասնակցի որոշում

4. Այլ հարցերի թվում, գնումների ընթացակարգերը կարգավորվում են Գնումների ծրագրում նախատեսված գնումների մանրամասն ընթացակարգերով և այլ սահմանային արժեքներով: Վարկառուն կարող է փոփոխել գնումների ընթացակարգերը կամ այլ սահմանային արժեքները ԱԶԲ-ի նախնական համաձայնությունը ստանալու դեպքում: Կատարված փոփոխությունները պետք է իրենց արտացոլումը գտնեն Գնումների ծրագրի վերանայված տարբերակում:

5. Ազգային մրցույթ. Վարկառուն և ԱԶԲ-ն երաշխավորում են, որ նախքան ազգային մրցույթի շրջանակներում որևէ գնումների գործընթաց կազմակերպելը վարկառուի գնումների ներքին ընթացակարգերը համահունչ են Գնումների ուղեցույցների պահանջներին: Նման ընթացակարգերի առնչությամբ վարկառուի և ԱԶԲ-ի միջև համաձայնեցված որևէ փոփոխություն կամ պարզաբանում պետք է նախատեսվի Գնումների ուղեցույցներում: Համաձայնեցված փոփոխությունների կամ պարզաբանումների առնչությամբ հետագա փոփոխություններն ուժի մեջ են մտնում նման փոփոխության մասին Վարկառուի և ԱԶԲ-ի գրավոր համաձայնության պարագայում:

Գ. Հաղթող մասնակցին որոշելու պայմանները

6. Վարկառուն զերծ է մնում վարկային միջոցների հաշվին աշխատանքների կատարման որևէ պայմանագիր կնքելուց, քանի դեռ չեն կատարվել ստորև ներկայացված պայմանները.

ա/ ԱԶԲ-ի կողմից նախնական բնապահպանական գնահատման հաստատումը, և

բ/ ԱԶԲ-ի կողմից համապատասխան հողի ձեռքբերման և վերաբնակեցման ծրագրի հաստատումը:

Դ. Խորհրդատվական ծառայություններ ընտրելը

7. Որակի և արժեքի համադրությամբ ընտրությունը. Եթե ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն չի կայացվել և բացառությամբ ստորև ներկայացված պարբերությամբ նախատեսված կարգի, վարկառուն կիրառելու է որակի և արժեքի համադրությամբ չափավոր ընտրություն խորհրդատվական ծառայություններ ընտրելու և ներգրավելու պարագայում:
8. Խորհրդատվական ծառայություններ ընտրելու և ներգրավելու դեպքում Վարկառուն կիրառելու է հետևյալ եղանակը՝ համաձայն Գնումների ծրագրում նախատեսված ընթացակարգերի.

Խորհրդատուների Որակավորման ընտրություն մանրակրկիտ ծրագրավորման համար

9. Ըստ անհրաժեշտության Վարկառուն կարող է վարձել անհատ խորհրդատուների ծրագրի կառավարման գործում և ծրագրի իրականացման գործընթացներում աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ հայաձայն անհատ խորհրդատուների ներգրավման մասին ԱԶԲ-ի ընթացակարգերի:

Ե. Արդյունաբերական կամ մտավոր սեփականության իրավունքներ

10. ա/ Վարկառուն և ԱԶԲ-ն երաշխավորում են, որ գնված բոլոր ապրանքները և ծառայությունները (այդ թվում նաև առանց սահմանափակումների, համակարգչային կոշտ սկավառակները, ծրագրային ապահովումները և համակարգերը, լինեն դրանք առանձին գնված, թե ներառված լինեն գնված այլ ապրանքներում և ծառայություններում) չեն խախտում արդյունաբերական կամ մտավոր սեփականության որևէ իրավունք կամ որևէ երրորդ կողմի պահանջի իրավունքը:

բ/ Վարկառուն երաշխավորում է, որ ապրանքների և ծառայությունների բոլոր պայմանագրերի կողմերը պատշաճ կերպով ներկայացված են, ինչպես նաև պայմանագրերը նախատեսում են համապատասխան իրավունքներ և պարտականություններ կապալառուի կամ մատակարարի համար սույն կետի "ա" ենթակետում նախատեսված դեպքերում:

11. Վարկառուն երաշխավորում է, որ խորհրդատուների հետ Վարկառուի կնքած բոլոր պայմանագրերում պատշաճ կերպով ներկայացված են կողմերը, ինչպես նաև կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝ երաշխավորելու, որ տրամադրվող խորհրդատվական ծառայությունները չեն խախտում արդյունաբերական կամ մտավոր սեփականության որևէ իրավունք կամ որևէ երրորդ կողմի պահանջի իրավունքը:

Զ. Գնումների մասով որոշումների հաստատումը ԱԶԲ-ի կողմից

12. Միջազգային մրցույթի ընթացակարգերի համաձայն իրականացված բոլոր գնումների պայմանագրերը պետք է նախապես հաստատվեն ԱԶԲ-ի կողմից՝ բացառությամբ այն դեպքի, երբ Վարկառուի և ԱԶԲ-ի միջև կայացվել է այլ համաձայնություն, որն ամրագրված է Գնումների ծրագրում:

Հավելված 5

Ծրագրի իրականացումը և ծրագրի կառուցվածքների շահագործումը

I. Ծրագրի իրականացման համաձայնություններ

1. ՏԿՆ-ը, որպես ծրագիրն իրագործող կառույց, պատասխանատվություն է կրելու ծրագրի իրագործման համար:
2. Հայաստանի ճանապարհային տեսչությունը /ՀՃՏ/, որպես ծրագրի իրականացման գրասենյակ, իրականացնելու է ծրագիրը:
3. ՀՃՏ-ն ստեղծելու է ծրագրի կառավարման բաժին, որը պատասխանատու է լինելու ծրագրի ընթացիկ իրականացման համար (համապատասխանաբար), այդ թվում նաև այլ հարցերի թվում (i) ծրագրի իրականացման առաջընթացի մոնիտորինգը, (ii) մասհանումների դիմումների և ծրագրի առաջընթացի մասին զեկույցների նախապատրաստումը, (iii) ծրագրի հաշիվների վարումը և ֆինանսական տվյալների ամփոփումը ծրագրի աուդիտի նպատակով և (iv) գնումների իրականացումը, այդ թվում նաև պայմանագրերի գործերը:
4. Վարկառուն երաշխավորում է աշխատանքների արդյունավետ համակարգումը և շփումները համապատասխան պետական մարմինների հետ՝ ապահովելով նման գործընթացի իրականացումը Ծրագրի կառավարման խորհրդի կողմից, որի համանախագահներն են ՀՀ էկոնոմիկայի նախարարը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարը: Խորհրդի կազմում ներգրավվելու են նաև ներկայացուցիչներ այլ նախարարություններից, այդ թվում ՀՀ ֆինանսների նախարարությունից, ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

II. Շահագործման կանոններ

<u>Ճանապարհային ոլորտի գլխավոր ծրագիրը</u>

5. Վարկառուն նախապատրաստելու է ճանապարհային տրանսպորտային ենթաոլորտի ծրագիրը (2010 – 2020թթ.) և ընդունելու է այն մինչև 2011թ. հունիսը ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով: Նման ծրագրում մանրամասն կերպով նախատեսվելու են ծրագրի քաղաքականության գործողություններ և միջոցառումներ՝ նպատակ ունենալով իրականացնել հետևյալը. (i) ծրագրի պահպանության աշխատանքների արդյունավետ պլանավորման և առաջնահերթությունների համակարգի սահմանումը, (ii) ԱԶԲ-ի համար ընդունելի համապատասխան ճանապարհների պահպանության համար համապատասխան միջոցների հատկացումը, (iii) ճանապարհների պահպանության համապատասխան չափանիշների ընդունումը և ճանապարհների պահպանության պլանավորման և շահագործման վերաբերյալ համապատասխան ձեռնարկների մշակումը և (iv) դասընթացների իրականացումը պահպանության հարցերով զբաղվող տեղական ենթակառուցվածքների կարողությունները հզորացնելու նպատակով:

<u>Քաղաքականության շուրջ երկխոսություն</u>

6. Վարկառուն երաշխավորում է, որ ԱԶԲ-ն տեղեկացված լինի ճանապարհային ենթաոլորտում Վարկառուի կողմից վարվող քաղաքականության և ծրագրերի մասին, որոնք կարող են նյութական ազդեցություն ունենալ Ծրագրի տնտեսական կայունության

կամ ազդեցություն ունենալ կառուցվածքի շրջանակներում ֆինանսավորվող որևէ այլ ծրագրի, ենթածրագրի կամ բաղադրիչի վրա:

7. Այնուհետև, Վարկառուն երաշխավորում է հետևյալը. (i) Ծրագրի իրականացման բաժնի կողմից ղեկավարվող PCA-ի շրջանակներում իրականացվող քաղաքականությունը, ըստ որի ծրագրի իրականացման բաժինը ղեկավարում է ճանապարհային ենթասեկտորի զարգացումը և շահագործումը, համահունչ են՝ ապահովելով ճանապարհային ենթաոլորտի քարտեզի և ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացների ներդաշնակությունը, (ii) ներդրվել են լավագույն ջանքերը տարանցիկ միջսահմանային ճանապարհները առավել դյուրին դարձնելու նպատակով, որը պետք է համապատասխանի Միջազգային հիմնական ճանապարհային ուղիների մասին Եվրոպական համաձայնագրի պահանջներին՝ ընդունված 1975թ.-ի նոյեմբերի 15-ին, և (iii) մեծ առաջնահերթություն ունի ճանապարհային ենթաոլորտի աշխատուժի, տեխնիկական, կառավարման և վարչական կարողությունների զարգացումը՝ ներդրումային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ենթակառուցվածքի պլանավորման, զարգացման և շահագործման հարցում առավել բարձր արդյունավետություն ստանալու նպատակով:

<u>Սեփականատիրության և շահագործման իրավունքի փոփոխումը</u>

8. Վարկառուն երաշխավորում է ԱԶԲ-ի համաձայնության ստացումն առնվազն վեց (6) ամիս նախքան հետևյալ գործընթացների իրականացումը. (i) Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ճանապարհի, ճանապարհային կառուցվածքի կամ կառույցի սեփականատիրոջ փոփոխումը, կամ (ii) Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ճանապարհի, ճանապարհային կառուցվածքի կամ կառույցի մասի կամ վերահսկողության որևէ վաճառք, փոխանցում կամ հանձնարարում, (iii) շահագործման և պահպանության նկատմամբ ԱԶԲ-ի գործառույթների և իրավասությունների փոփոխությունը կախված Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ճանապարհի, ճանապարհային կառուցվածքի կամ կառույցի վարձակալության, այլ պայմանագրային հարաբերությունների կամ նման հարաբերություններում կատարվող փոփոխությունների հետ: Վարկառուն երաշխավորում է, որ նման փոփոխություններն իրականացվեն իրավաբանական նորմերի պահպանմամբ և թափանցիկ եղանակով:

<u>Համագործակցային ֆինանսավորումը</u>

9. Վարկառուն երաշխավորում է հետևյալը. (i) ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների ժամանակին տրամադրումը, (ii) համապատասխան միջոցների հատկացումը՝ ճանապարհային միջանցքի զգալի պաշտպանությունը ծրագրի շահագործման ողջ ընթացքում իրականացնելու նպատակով, (iii) ճանապարհային տրանսպորտի ենթասեկտորի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների առկայությունը և (iv) լավագույն ջանքերի ներդրումը հավելյալ ֆինանսական ռեսուրսներ ձեռք բերելու նպատակով, որոնք կարող են անհրաժեշտ լինել ԱԶԲ-ի հետ համաձայնեցված հյուսիս – հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման և վերականգնման համար:

<u>Ճանապարհային պահպանության ֆինանսավորումը</u>

10. Վարկառուն երաշխավորում է, որ ԱԶԲ-ի հետ ճանապարհային ծրագրի շրջանակներում իրականացվող ճանապարհների պահպանության համար անհրաժեշտ փաստացի տարեկան ծախսերը (այդ թվում նաև տրոտուկարգ պատահարների դեպքում պահպանությունը, սակայն բացառելով վերականգնումը և նոր շինարարությունը)

համամասնորեն կաճեն 2008թ. բյուջեի ընդհանուր աճի առնվազն 5%-ով նույն տեմպերին համահունչ կարգով:

Շինարարության որակը

11. Վարկառուն երաշխավորում է, որ (i) ծրագրի շրջանակներում ճանապարհը վերականգնվելու կամ վերակառուցվելու է մրցույթի փաստաթղթերում նախատեսված դիզայնի, շինարարական առանձնահատկությունների, և այլ փաստաթղթերի համաձայն, (ii) շինարարության նկատմամբ վերահսկողությունը, որակի հսկողությունը և պայմանագրերի կառավարումն իրականացվելու են միջազգային ընդունելի չափանիշների համաձայն: Վարկառուն երաշխավորում է, որ ՏԿՆ-ը և Ծրագրի իրականացման գրասենյակը կիրականացնեն ծրագրի կառուցվածքների կառուցումը, սարքավորումներով հագեցումը, շահագործումը, պահպանությունը և կառավարումը բոլոր այն միջազգային պայմանագրերի և կոնվենցիաների համաձայն, որոնք Հայաստանը վավերացրել է:

Կոռուպցիայի դեմ պայքարը և հանրային կառավարումը

12. Ծրագրի գործունեության շրջանակներում Վարկառուն հետևելու է ԱԶԲ-ի կոռուպցիայի դեմ քաղաքականությանը (որն ընդունվել է 1998թ.-ին և հետագա փոփոխությունների է ենթարկվել): Վարկառուն, հարգելով հանրային կառավարման, հաշվետու լինելու և թափանցիկության սկզբունքները պահպանելու իր պարտավորությունները, ընդունում է հետևյալը. ա/ ԱԶԲ-ը իրեն իրավունք է վերապահում անմիջականորեն կամ իր գործակալների միջոցով ուսումնասիրել ծրագրին առնչվող կոռուպցիայի, կեղծիքի, խաբեության ցանկացած դրսևորում, և բ/ լիարժեք կերպով համագործակցել նման որևէ հետաքննության և նշված գործընթացում ցուցաբերել համարժեք օժանդակություն: Վարկառուն երաշխավորում է, որ Ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր պայմանագրերը նախատեսեն դրույթներ, ըստ որոնց ԱԶԲ-ին իրավունք է վերապահվում աուդիտի ենթարկել և ստուգել ծրագրի իրականացման գրասենյակի գրառումները և հաշիվները և բոլոր կապալառուներին, մատակարարներին, խորհրդատուներին և ծրագրի հետ կապված բոլոր այլ ծառայություններ մատուցողներին:

Ճանապարհի անվտանգությունը

13. Վարկառուն երաշխավորում է, որ ծրագրի իրականացման գրասենյակը ծրագրի իրականացման ընթացքում և ծրագրի ավարտից հետո ընկած ժամանակահատվածում կտեղադրի ճանապարհային անվտանգության նշաններ և միջոցներ, ինչպես օրինակ նախազգուշական նշաններ, մայթերին նշապատկերներ, ճանապարհային նշաններ և ազդանշաններ, հաղորդակցության հնարավորություններ, վտանգի կանխարգելման միջոցներ /բարյերներ/ և երթևեկության մոնիտորինգի հնարավորություններ, որոնք բոլորը կհամապատասխանեն կիրառվող լավագույն պրակտիկային և բոլոր այն միջազգային կոնվենցիաների պահանջներին, որոնց Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է: Վարկառուն երաշխավորում է, որ ծրագրի շրջանակներում ճանապարհի շահագործումից առնվազն վեց /6/ ամիս առաջ. (i) ծրագրի իրականացման գրասենյակը մշակելու և իրականացնելու է ԱԶԲ-ի համար ընդունելի ծրագիր՝ ճանապարհային ենթակառուցվածքի կառուցվածքների անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով, և (ii) Վարկառուի համապատասխան մարմինները պատրաստ կլինեն վերահսկելու ծրագրի շրջանակներում շահագործվող ճանապարհը և ներպետական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի կիրարկումը: Վարկառուն երաշխավորում է, որ ծրագրի շրջանակներում կառուցվող ճանապարհի շահագործումից հետո ծրագրի իրականացման գրասենյակը մոնիտորինգ կիրականացնի վթարների թվի և երթևեկության

ծավալների նկատմամբ և գործի կդնի անվտանգության համապատասխան միջոցառումներ:

Բնապահպանական հարցեր

14. Վարկառուն երաշխավորում է, որ ծրագիրը մշակվում, իրականացվում, պահպանվում և մոնիտորինգի է ենթարկվում համաձայն հետևյալի. ա/ ոլորտը կարգավորող բոլոր բնապահպանական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, բ/ ԱԶԲ բնապահպանական քաղաքականության (2002թ.) և գ/ բնապահպանական կառավարման ծրագրի՝ ներառյալ մեղմացմանը միտված միջոցառումների և նախնական բնապահպանական ուսումնասիրության իրականացումից ծագող մոնիտորինգի պահանջների: Վարկառուն հետամուտ է լինում, որպեսզի ծրագրի իրականացման գրասենյակն իրականացնի հետևյալը. ա/ կապալառուների պայմանագրերը նախատեսելու են պայմաններ, ըստ որոնց վերջիններս պարտավոր են կատարել նախնական բնապահպանական ուսումնասիրության և բնապահպանական կառավարման ծրագրում նախատեսված մեղմացմանը միտված բնապահպանական միջոցառումները, և բ/ կապալառուների նկատմամբ վերահսկողություն է իրականացվելու՝ ստուգելու վերջիններիս կողմից նախնական բնապահպանական ուսումնասիրության և բնապահպանական կառավարման ծրագրում նախատեսված մեղմացմանը միտված բնապահպանական միջոցառումների իրականացումը:

Հողի ձեռքբերում և վերաբնակեցում

15. Թեև ծրագիրը չի նախատեսում հողակտորների ձեռքբերումների և վերաբնակեցումների գործընթացներ, սակայն անհրաժեշտության դեպքում Վարկառուն երաշխավորում է, որ հողի ձեռքբերումը և վերաբնակեցումն իրականացվի ԱԶԲ-ի հետ հողի ձեռքբերման և վերաբնակեցման ծրագիրը համաձայնեցնելուց անմիջապես հետո՝ համաձայն ոլորտը կարգավորող բոլոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, ԱԶԲ-ի *Ոչ կամավոր վերաբնակեցման քաղաքականության* (1995թ.) և ԱԶԲ-ի հետ համաձայնեցված հողի ձեռքբերման և վերաբնակեցման սկզբունքների՝ ըստ ՇՖՊ-ի: Վարկառուն երաշխավորում է, որ հողի ձեռքբերման և վերաբնակեցման ծրագրի իրականացման նկատմամբ իրականացվելու է վերահսկողություն, ինչպես նաև այն գնահատվելու է և համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ԱԶԲ՝ ըստ վերաբնակեցման ծրագրի: Վարկառուն երաշխավորելու է նաև, որ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր հողակտորները և հարակից տարածքները ժամանակին տրամադրվեն ծրագրին:
16. Վարկառուն երաշխավորում է, որ կապալառուները սկսեն աշխատանքները համապատասխան ճանապարհի հետ առնչվող հողերի ձեռքբերման և վերաբնակեցման ծրագրի իրականացումից հետո՝ համաձայն դրանում նախատեսված պայմանների:

Տեղական խորհրդատվություններ և գենդերային հարցեր

17. Վարկառուն երաշխավորում է, որ ծրագրի իրականացման ընթացքում անվտանգության, սոցիալական և մշակութային բնույթի բոլոր տեղական խորհրդատվություններն իրականացվեն ծրագրի շրջանակներում մշակված աղքատության կրճատման և սոցիալական վերլուծությունների ամփոփ փաստաթղթի համաձայն: Տեղական զբաղվածությունն առավելագույնի հասցնելու մեխանիզմները նախատեսվելու են նաև մրցույթի հայտարարություններում:

Աշխատանքային պայմաններ

18. Վարկառուն երաշխավորելու է, որ բոլոր կապալառուները հետամուտ լինեն հետևյալ պայմանների կատարմանը. (i) ոլորտը կարգավորող աշխատանքային բոլոր նորմերի պահպանումը, (ii) կիրառել բոլոր հնարավոր ջանքերը կանանց և տեղաբնակներին, ինչպես նաև ծրագրի իրականացման մերձակա բնակավայրերում բնակվող հաշմանդամներին աշխատանքներում ներգրավելու համար, (iii) շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց շրջանում սեռական ճանապարհով տարածվող հիվանդությունների մասին տեղեկատվության տարածումը, (iv) հավասար աշխատավարձի սահմանումը կանանց և տղամարդկանց համար համարժեք աշխատանքի դիմաց, (v) անվտանգ աշխատանքային պայմանների նախատեսումը կանանց և տղամարդկանց համար, և (vi) անչափահասներին աշխատանքում ներգրավելու գործելակերպից զերծ մնալը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր աշխատանքային պայմանագրերը պետք է համապատասխան դրույթներ նախատեսեն սահմանված պարտավորությունների վերաբերյալ: Նման պահանջների պահպանման նկատմամբ խստագույն մոնիտորինգ կիրականացվի ծրագրի իրականացման ընթացքում:

<u>Առողջությանը ներկայացվող ռիսկերը և դրանց կանխարգելումը</u>

19. Վարկառուն երաշխավորում է, որ կապալի պայմանագրերը նախատեսեն համապատասխան դրույթներ շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց շրջանում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տեղեկատվություն տարածելու մասին: Նման միջոցառումը պետք է հանդիսանա շինարարության ընթացքում անվտանգության և առողջապահության իրականացվող արշավի մի մասը:

<u>Անօրինական տրաֆիկինգ</u>

20. Վարկառուն պետք է ձեռնարկի կոնկրետ և համապատասխան միջոցառումներ կանխելու ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում կառուցվող ճանապարհով մարդկանց, վայրի բնության և կենդանական աշխարհի, ոչնչացման վտանգի տակ գտնվող բուսատեսակների և ապօրինի նյութերի փոխադրումները և վաճառքը: